

չարաթ մի, այս է Վերացման Խաչէն մինչև
ցաւոր Յակոր» (էջ 382) :

Հոս ի Բոհաթին 1627ին օրինակած է
Աղօթից գիրք մը. տես էջ 395—396 :

1629ին ի Լվով Զուղայեցի Յովհաննէս
բժիշկի յանձնարարութեամբ կ'օրինակէ «Յա-
ղագս կազմութեան եւ գոյացութեան մարդոյ
եւ այլ բժշկական խրատներ» . Յիշատակա-
րանին¹⁹ մէջ կը գրէ . «Գրեցաւ գիրս ի
թուականիս Հայոց ՌՀԸ . սեպտ . ԺԵ . . . ի քա-
ղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ննջման
սուրբ Աստուածածնին» . կը խնդրէ յիշել «Եւ
դիս անարժան գրիչս զՍիմէոն դպիրս» : Խօ-
սելով հոս Շվէտներու եւ Թաթարներու կա-
տարած ասպատակութեանց վրայ ի Լեհս, կը
գրէ . «զոր ես ցաւազին դիմօք, աղիողորմ
կոծմամբ ակնատես եւ ականջալուր եղեալ
իրացս՝ վշտանայի, հոգոց հանէի եւ հառա-
չէի» :

Իբր 1634ին գրած է Սիմէոն ոտանաւոր
Յիշատակարան մը Լեհահայոց եկեղեցական
գժաութեանց մասին, զոր Հ . Ղ . Ալիշան ա-
նուանած է Վրպասանութիւն Նիկոլական :
Տե՛ս այս մասին էջ 399—405 :

Իսկ Ուղեգրութեան կից սրտմած է
1620—1635 տարիներու քաղաքական անց-
քերը :

1636 թուին կը գրէ Սիմէոն էջմ . 1004

¹⁹ Ս . Տէր-Աւետիսեան՝ Յուց . հայերէն ձեռ-
գրաց Նոր-Ջուղայի, Թ . 235 Ամենափրկիչ Վանայ :
Տե՛ս վարը, էջ 397—399 :